ՖՈԿՈՒՍԽՄԲԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՐՑԱՇԱՐ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Հարգելի՛ ուսանող,

Երևանի պետական համալսարանն իրականացնում է սոցիոլոգիական հետազոտություն՝ միտված բարելավելու համալսարանական կրթության որակը: Քննարկման ընթացքում ստացված բոլոր կարծիքներն օգտագործվելու են ընդհանրացված տեսքով: ԵՊՀ կրթական գործընթացների վերաբերյալ Ձեր կարծիքը շատ կարևոր է համալսարանական կրթության որակի բարելավման ուղղությունները հստակեցնելու համար:

Շնորհակալ ենք ԵՊՀ կրթության որակի բարելավման գործում ներդրում ունենալու նպատակով Ձեր պատրաստակամության և ժամանակի տրամադրման համար:

ՄԱՍ Ա
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Ի՞նչ գործոններ են ազդել մասնագիտության, բուհի, կրթական ծրագրի ընտրության վրա:

- *Քննարկել այնպիսի գործոնների հնարավոր ազդեցությունը, ինչպիսիք են ընտանիքի անդամների կարծիքները, մասնագիտության ոլորտում, տվյալ բուհում առկա բարեկամական կապերը, մասնագիտության արդիական, եկամտաբեր, հանրօգուտ լինելը, բուհի համբավը, ուսման վարձավճարի չափը և այլն:*
- *Որտեղի՞ց և ինչպե՞ս են տեղեկացել ընտրված կրթական ծրագրի մասին: Քննարկել տեղեկատվության ստացման գործընթացը՝ որտեղից, բուհ դիմելուց որքան ժամանակ առաջ, ինչ աղբյուրներից: Նշել, թե ինչ աղբյուրներից և որքանով են տեղյակ եղել ընտրված կրթական ծրագրի նպատակներին, բովանդակությանը և ուսումնառության վերջնարդյունքներին, ապագա կարիերայի հնարավորություններին, ծանոթացել էին արդյոք համապատասխան ֆակուլտետի մասին տեղեկատվությանը, ղեկավար կազմին և դասախոսներին և այլն :*
- *Քննարկել, թե ուսումնառության արդյունքում որքանով են արդարացվել ուսանողների նախնական պատկերացումները և սպասումները ընտրված մասնագիտության և կրթական ծրագրի վերաբերյալ: Եթե՝ ոչ, ապա ինչպե՞ս և ինչո՞ւ:*

ՄԱՍ Բ
ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քննարկել կրթական ծրագրի հիմնական ուժեղ և թույլ կողմերը:

- *Քննարկել, թե որոնք են կրթական ծրագրի շրջանակում ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները, որոնք ուսանողները համարում են անհրաժեշտ մասնագիտական արդյունավետ գործունեության, մասնագիտական առաջընթացի համար:*
- *Կա՞ն արդյոք այնպիսի գիտելիքներ և հմտություններ/դասընթացներ, որոնք անհրաժեշտ կլինեին մասնագիտական գործունեության և կարիերայի մեջ, սակայն չեն դասավանդվել և չեն տրվել կրթական ծրագրի շրջանակներում:*
- *Քննարկել, թե ո՛ր դասընթացներն էին, որ ֆոկուսխմբային քննարկման մասնակիցների կարծիքով որևէ կերպ չեն նպաստում իրենց մասնագիտական գործունեության իրականացմանը: Ի՞նչ դասընթացներ կուզենային լսել դրանց փոխարեն:*

Այստեղ ֆոկուսխմբային քննարկման բոլոր մասնակիցներին տրամադրել քարտ լրացնելու համար, որում տրված կլինեն մասնակիցների կրթական ծրագրի վերջնարդյունքները (բացված, շարադրված մատչելի լեզվով) և խնդրել նշել յուրաքանչյուր վերջնարդյունքի ձեռքբերման աստիճանն ու կարևորությունը մասնագիտական գործունեության առումով, օրինակ՝

Ծրագրի կրթական վերջնարդյունքները	Ուսումնառության ընթացքում տրված գիտելիքների և կարողությունների անհրաժեշտությունը ապագա մասնագիտական գործունեության համար			Ուսումնառության արդյունքում գիտելիքներին և կարողություններին տիրապետելու մակարդակը		
	Անհրաժեշտ է	Մասամբ	Բոլորովին անհրաժեշտ չէ	Լիարժեք	Մասամբ	Չեմ տիրապետում

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կրթական ծրագրում հանձնարարվող ինքնուրույն աշխատանքների (հետազոտական աշխատանք, տնային առաջադրանքներ, էսսեներ և այլն) օգտակարությունը՝ գիտելիքների և կարողությունների ստուգման և դրսևորման առումով:

- *Քննարկել ինքնուրույն աշխատանքի ձևերի արդյունավետությունը գիտելիքների և կարողությունների ձեռքբերման, դրսևորման, գնահատման*

առումով: Քննարկման մասնակիցներին խնդրել առաջարկել հնարավոր այլընտրանքներ, որոնք ավելի օգտակար կարող են լինել դասընթացի շրջանակում գիտելիքի դրսևորման և, մասնավորապես, ընթացիկ քննությունների հանձնման տեսանկյունից:

Կրթական ծրագրում ավարտական աշխատանքի կատարման գործընթացի արդյունավետության քննարկում:

- *Քննարկել, թե որքանով են ավարտական աշխատանքի թեմայի ընտրության, աշխատանքի կատարման /այդ թվում՝ ըստ տեսական և հետազոտական մասերի/, պաշտպանելու գործընթացները կապված եղել մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման, զարգացման, փորձարկման և կիրառման հետ:*
- *Ֆոկուսխմբային քննարկման մասնակիցների հետ քննարկել, թե ինչն է հատկապես նպաստել ավարտական աշխատանքների պատրաստման (ներառյալ գրականության մատչելիությունն ու արդիականությունը, գիտական ղեկավարի հետ համագործակցությունը, ժամանակի կառավարումը և այլն) և պաշտպանության, ինչպես նաև հետազոտության իրականացման արդյունավետությանը կամ խոչընդոտել այն:*
- *Ֆոկուսխմբային քննարկման մասնակիցների հետ դիտարկել գրագողության երևույթը գիտելիքների ստացման և ստուգման ընթացքում, դրա տարածվածությունն ու այն հաղթահարման հնարավոր մոտեցումները:*

ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ֆոկուս խմբերի մասնակիցների հետ քննարկել նրանց անցկացրած պրակտիկաների տեսակները, ընթացքը, ուսանողների՝ դրանց մասնակցության ձևն ու բովանդակությունը, ստացած գիտելիքներն ու կարողությունները, ընդհանուր առմամբ՝ պրակտիկաների օգտակարությունը մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման առումով:

- *Քննարկել, թե պրակտիկաների ընթացքում ինչ մասնագիտական կամ ընդհանրական փորձ և հմտություններ են ձեռք բերել, որոնք սահմանված են կրթական ծրագրի վերջնարդյունքներով և ակնկալվել են ուսանողների կողմից՝ ելնելով մասնագիտության մասին նրանց պատկերացումներից: Ակնկալվող ո՞ր մասնագիտական գիտելիքներն ու կարողություններն են ձեռք բերվել պրակտիկաների ընթացքում և ինչ չափով: Նշել պրակտիկաների կազմակերպման և իրականացման գործընթացների ուժեղ և թույլ կողմերը, արդյունքներն ու բացթողումները:*
- *Ի՞նչ կազմակերպություններում են անցել պրակտիկա, և որքանո՞վ է այն արդյունավետ եղել: Որքանո՞վ են պրակտիկայի իրականացման համար*

ընտրված վայրերն ու ռեսուրսները մատչելի, համարժեք, օգտակար եղել մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման, փորձարկման և զարգացման համար:

- *Ի՞նչ կառաջարկեին քննարկման մասնակիցները՝ իրենց ֆակուլտետում պրակտիկաներն ավելի արդյունավետ դարձնելու համար:*

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Գնահատել դասավանդումն ու կրթական միջավայրը

- *Քննարկել դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդները, դասավանդման արդյունավետությունը, դասախոսների հետ անհատական շփման և խորհրդատվության հնարավորությունը, ուսումնաօժանդակ նյութերի առկայությունը և արդիականությունը (թարմությունը, մատչելիությունը), բավարար չափով լսարանների առկայությունն ու հարմարությունները, ուսումնական գործընթացի ապահովվածությունն անհրաժեշտ տեխնիկական:*
- *Քննարկել, թե կրթական ծրագրում ընդգրկված դասավանդողները որքանով են նախապատրաստված դասընթացները և այլ ուսումնական մոդուլները հմտորեն և ժամանակակից մոտեցումներով/մեթոդներով մատուցելու համար և որքանով են նպաստել մասնագիտությամբ (կրթական ծրագրով) ենթադրվող գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը, յուրացմանը, փորձարկմանը և դրսևորմանը:*
- *Խնդրել նշել ծրագրում դասավանդման ամենաարդյունավետ և ամենաանարդյունավետ մոտեցումներով տպավորություն ստեղծած երեքական դասախոսների: Անկաշկանդությունն ապահովելու նպատակով խնդրել մասնակիցներին այդ անունները առանձին նշել թղթիկների վրա և փոխանցել Ձեզ:*
- *Ինչպիսի՞ դժվարություններ են առաջացել ձեր ուսումնառության ընթացքում:*
- *Խնդրել առաջարկություններ անել կրթական ծրագրի բարելավման և զարգացման վերաբերյալ (օրինակ՝ ծրագրի որ դասընթացները/կրթական մոդուլներն եք համարում խիստ անօգտակար և դրանց փոխարեն ինչ կուզենայիք ուսումնասիրել: Դասավանդման, ուսումնառության և գնահատման ինչպիսի մեթոդներ կցանկանայիք կիրառվեին և այլն):*

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ